ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).

Ներդրումների խթանումը և ներդրումային միջավայրի բարելավումը ՀՀ կառավարության տնտեսության զարգացման ռազմավարության կարևորագույն բաղադրիչներից են: Տնտեսական և իրավական հարաբերությունների զարգացման ներկա փուլում անհրաժեշտ է ներդրումային հարաբերությունների համար արդիական, ամբողջական և համապարփակ կարգավորում, որն ի զորու կլինի ապահովելու ներդրողների իրավական պաշտպանվածությունը, խթանելու նոր ներդրումների ներգրավումը և ամրապնդելու պետական քաղաքականության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

Նախագծի նպատակն է ամրագրել ներդրումային հարաբերությունների արդի պահանջներին համապատասխանեցված, պարզ, թափանցիկ և կանխատեսելի իրավական հիմքեր՝ ապահովելու ներդրողների իրավունքների պաշտպանությունը, ներդրումների ազատությունը և խթանումը՝ ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա ներդրողների համար: Նախագծի ընդունմամբ կձևավորվի ներդրումային հստակ և կանխատեսելի իրավական միջավայր, որը հնարավորություն կտա Հայաստանին բարձրացնել իր միջազգային ներդրումային վարկանիշը և մրցունակությունը, ներդրումային գրավչությունը և խթանել կայուն ու ներառական տնտեսական աճ:

2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.

Ներկայումս ներդրումային քաղաքականության իրականացումը հիմնված է հնացած և մասնակիորեն կիրառելի իրավական ակտերի վրա, մասնավորապես՝ «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքի, որն ընդունվել է 1994 թվականին, և չի ապահովում ներդրումային գործընթացի ժամանակակից պահանջներին համարժեք ամբողջական կարգավորումը: Գործող համակարգը չի երաշխավորում ներդրումների նկատմամբ կիրառվող ռեժիմների կանխատեսելիություն, խրախուսման համաչափություն, թափանցիկություն և կայունություն: Առկա է նաև ներդրումային քաղաքականության ինստիտուցիոնալ շրջանակի անկատարություն, որի հետևանքով պետական աջակցությունը ներդրումային ծրագրերին համակողմանի և համակարգված չէ: Միևնույն ժամանակ՝ միջազգային փորձը ցույց է տալիս, որ ներդրումային իրավունքի և խթանման արդիականացված դաշտը կարող է էապես նպաստել ուղղակի ներդրումների ներգրավման աճին:

Մասնավորապես, «Ներդրումների մասին» օրենքի մշակման ընթացքում ուսումնասիրվել են մի շարք երկրների փորձը, այդ թվում՝ Վրաստանի, Էստոնիայի, Լիտվայի, Ղազախստանի, Բուլղարիայի, Սերբիայի, Բոսնիա-Հերցեգովինայի, Ավստրիայի, Հունգարիայի, Ֆինլանդիայի, Իսլանդիայի, Իսպանիայի, Չինաստանի: Դիտարկված 13 երկրներից ներդրումների (օտարերկրյա ներդրումների) մասին օրենք ունեն 9-ը, որոնցից միայն 3-ի դեպքում է (Սերբիա, Լիտվա, Վրաստան) օրենքը վերաբերել և՛ տեղական

ներդրումներին, և՛ օտարերկրյա ներդրումներին, ընդ որում՝ նույնիսկ եթե այն վերաբերել է տեղական ներդրումներին՝ կարգավորման շրջանակը երկրից կախված խիստ տարբերվել է:

Ուսումնասիրված երկրներից Վրաստանում, Բուլղարիայում, Սերբիայում, Իսլանդիայում համապատասխան օրենքներում հստակ նշված են պատասխանատու մարմինների անվանումները, ընդ որում՝ Սերբիայում դրանք երեքն են՝ Տնտեսական զարգացման խորհուրդը, տնտեսական հարաբերությունների ոլորտում լիազոր նախարարությունը և Սերբիայի զարգացման գործակալությունը: Ի տարբերություն այս երկրների՝ Չինաստանում և Լիտվայում պարզապես նշված է, որ կառավարությունը կարող է հիմնել անհրաժեշտ կառուցվածքային մարմիններ՝ ներդրումների հետ կապված գործառույթները արդյունավետ իրականացնելու համար:

Մի շարք երկրների օրենսդրությունում՝ այդ թվում Լիտվայում, Վրաստանում, Ղազախստանում, ի հավելումն ներպետական ատյանների, հստակ նշվում են միջազգային կառույցներ (օրինակ, ICSID, UNCITRAL, Միջազգային առևտրի պալատի Ստոկհոլմի արբիտրաժ), որոնք պատասխանատու են ներդրումային վեճերի կարգավորման համար:

Հայաստանի օրենսդրությամբ սահմանվում է, որ օտարերկրյա ներդրողների հետ կապված վեճերը քննվում են Հայաստանյան դատարաններում, իսկ համաձայնության դեպքում այլ մարմիններում:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև, որ դիտարկված երկրներում գերազանցապես ներդրողների իրավունքները և նրանց տրվող երաշխիքների դրույթները կիրառվում են հնարավորինս ազատական մոտեցմամբ, ինչը թույլ է տալիս ապահովել ներդրումային միջավայրի գրավչությունը:

Ներդրումների մասին նոր օրենքի ընդունումը կարևոր քայլ է Հայաստանի ներդրումային միջավայրի և ներդրողների պաշտպանության ամրապնդման ուղղությամբ: Սակայն այն իդեալական կլինի, եթե ուղեկցվի նաև կարգավորիչ այլ փոփոխություններով, քանի որ ներդրումների պաշտպանության բազմաթիվ կարևոր կողմեր կարգավորվում են այլ իրավական ակտերով: Օրինակ՝ էքսպրոպրիացիայի և փոխհատուցման գործընթացները կարգավորվում են «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքով և Քաղաքացիական օրենսգրքով, փոքրամասնություն կազմող բաժնետերերի իրավունքները և կորպորատիվ կառավարման հարցերը կարգավորվելու են «Ընկերությունների մասին» օրենքով և Քաղաքացիական օրենսգրքով, սնանկությունը և պարտատերերի պաշտպանությունը կարգավորվում են «Սնանկության մասին» օրենքով, կապիտալի շուկայի թափանցիկությունը և ներդրողների բողոքարկման մեխանիզմները ապահովվում են «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով և «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» օրենքով: Հետևաբար, ներդրողների պաշտպանության էական բարելավումը կպահանջի նպատակային բարեփոխումներ այս և այլ ոլորտային օրենքներում՝ բացի «Ներդրումների մասին» նոր օրենքի ընդունումից:

Կառավարությունը նախաձեռնել է նշանակալի բարեփոխումներ, որոնք ուղղված են Հայաստանի ներդրումային միջավայրի արդիականացմանը և բարելավմանը: Սա, ի թիվս այլոց, ներառում է Սնանկության օրենսգրքի, «Ընկերությունների մասին» նոր օրենքի ընդունումը, ինչպես նաև «Տնտեսական մրցակցության և սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքում կատարված փոփոխությունները: Լրացուցիչ

բարեփոխումներ նախատեսվում են իրականացնել գործարար միջավայրի բարելավման ծրագրի շրջանակում, որը իրականացվում է Համաշխարհային բանկի, Եվրոպական միության և այլ միջազգային կազմակերպությունների աջակցությամբ:

Ստորև ներկայացված ցանկը ընդգծում է մի շարք իրավական ակտեր, որոնք կշահեն լրացուցիչ բարեփոխումներից: Այս ցանկը պետք է դիտարկվի որպես նախնական քարտեզագրում, այլ ոչ թե համապարփակ բարեփոխումների օրակարգ: Անհրաժեշտ է իրականացնել լրացուցիչ վերլուծություն՝ իրավական և ինստիտուցիոնալ դաշտում առկա բացերը բացահայտելու համար այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են հողային կառավարումը, հարկային և մաքսային վարչարարությունը, գործարար լիցենզիաներն ու թույլտվությունները, մտավոր սեփականությունը և վեճերի լուծման ընթացակարգերը՝ բարեփոխումների հաջորդականությունն ու առաջնահերթությունը որոշելու համար: Միայն նման ավելի լայն բարեփոխումների ծրագրի միջոցով Հայաստանը կարող է ապահովել, որ «Ներդրումների մասին» օրենքի նախագծում ուրվագծված կանխատեսելիության, թափանցիկության և արդարության սկզբունքները լիովին իրականացվեն գործնականում:

N	Իրավական ոլորտ		Իրավական ակտեր		Մանրամասներ
1	**Մտավոր սեփականության իրավունքներ (հեղինակային իրավունք, ապրանքանիշեր, գյուտեր) և նորարարություն**		• Քաղաքացիական օրենսգիրք (Բաժին 10) • «Ապրանքային նշանների մասին» օրենք • «Հեղինակային իրավունքների և հարակից իրավունքների մասին» օրենք • «Մաքսային կարգավորման մասին» օրենքի համապատասխան դրույթներ • Աշխատանքային օրենսգիրք		Վերանայել հիմնական օրենսդրությունը՝ մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության ամրապնդման, խախտումների կանխարգելման և իրավական պաշտպանության մեխանիզմների ծախսերի նվազեցման նպատակով:
2	**Ստարտափներ**		• «Ընկերությունների մասին» նոր օրենք (նախագիծ) • Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին օրենք • Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին օրենք		Ընդունել նոր «Ընկերությունների մասին» օրենքը՝ սկսնակ բիզնեսների ամբողջական կյանքի ցիկլի բարելավման համար (արդյունավետ կառավարման կառուցվածքներ, ճկուն բաժնետոմսերի դասի օպցիոններ, փոխարկելի

					գործիքներ, բաժնետոմսերի փոխանցման և միաձուլումների ու ձեռքբերումների պարզեցված գործընթացներ, աշխատակիցների կողմից բաժնետոմսերի սեփականության մեխանիզմներ և կամավոր լուծարման արագացված ընթացակարգեր): Վերանայել «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքը՝ նոր «Ընկերությունների մասին» օրենքի հետ համահունչ լինելու և ամբողջությամբ թվայնացված, տվյալահեն բիզնես ռեգիստրի ներդրման նպատակով: Անհրաժեշտության դեպքում փոփոխել «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքը՝ ներառելով այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են՝ աշխատակիցների բաժնետիրության ծրագրերի (ESOP) համար հարկային արտոնություններ, Հետազոտությունների և

					զարգացման (R&D) հարկային արտոնություններ, ստարտափների ներդրումներից ստացված կապիտալի եկամտի հարկման նվազեցում, համատեղ ներդրումային հիմնադրամների ստեղծում, կարգավորիչ «փորձարկման հարթակները», (regulatory sandboxes), ստարտափների վիզաներ և այլ համապատասխան դրույթներ:
3	**Փոքրամասնություն կազմող բաժնետերերի իրավունքների պաշտպանություն**		• Ընկերությունների օրենսդրական շրջանակ • Քաղաքացիական օրենսգիրք		Ընդունել «Ընկերությունների մասին» նոր օրենք, որը կամրապնդի կորպորատիվ կառավարման պահանջները՝ հստակեցնելով կառավարման տարբեր մարմինների իրավասությունները, վերացնելով շահերի բախման ռիսկերը և ուժեղացնելով փոքրամասնություն ունեցող ներդրողների պաշտպանությունը: Փոփոխություններ կատարել Քաղաքացիական օրենսգրքում՝ «Ընկերությունների մասին» նոր օրենքի հետ համապատասխանություն

					ն ապահովելու համար:
4	**Գույքի պաշտպանություն բռնագրավումից և արգելանքից**		• Կատարողական վարույթի մասին օրենք • Քաղաքացիական դատավարության օրենսգիրք • Վարչական դատավարության օրենսգիրք		Վերանայել հիմնական օրենսդրությունը՝ մրցակցային և արդար դատական համակարգ ստեղծելու միջոցով վերացնելու համար անհիմն սահմանափակումները, առգրավումները և կալանքները:
5	**Սնանկություն**		• Սնանկության օրենսգիրք • Քաղաքացիական օրենսգիրք		Ընդունել Սնանկության օրենսգիրք, որը նախատեսված է ներդրողների շահերը պաշտպանելու համար սնանկության գործընթացներում:
6	**Արժեթղթերի թողարկում և ազդագրերի գրանցում**		• Արժեթղթերի շուկայի մասին օրենք • Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին օրենք		Վերանայել հիմնական օրենսդրությունը՝ ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով հաշվետու թողարկողների արժեթղթերում ներդրումներ կատարած ներդրողներին պաշտպանելու համար:
7	**էքսպրոպրիացիա**		• Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին օրենք • Քաղաքացիական օրենսգիրք • Հողային օրենսգիրք • Ոլորտային օրենքներ (օր.՝ էներգետիկա, հանքարդյունաբերություն)		Վերանայել հիմնական օրենսդրությունը՝ սահմանումները, ընթացակարգերը և փոխհատուցման կանոնները համապատասխանեցնելու «Ներդրումների մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածին՝ ապահովելով համաչափություն, շուկայական արժեքի արդար փոխհատուցում և

					ընթացակարգային երաշխիքներ:
8	**Վեճերի լուծում և արբիտրաժ**		• Առևտրային արբիտրաժի մասին օրենք • Հաշտարարության մասին օրենք • Քաղաքացիական դատավարության օրենսգիրք • Վարչական դատավարության օրենսգիրք		Վերանայել հիմնական օրենսդրությունը՝ ապահովելու համար «Ներդրումների մասին» օրենքի նախագծի 14-րդ հոդվածի հետ լիարժեք համատեղելիությունը, ներառյալ միջնորդության հստակ ընթացակարգերը և որոշումների կիրառելիությունը:
9	**Հարկային և մաքսային արտոնություններ**		• Հարկային օրենսգիրք • Մաքսային օրենսգիրք		Վերանայել հիմնական օրենսդրությունը՝ «Ներդրումների մասին» օրենքի նախագծի 16-18-րդ հոդվածներին համապատասխան հստակ սահմանելու և թափանցիկ կերպով իրականացնելու հարկաբյուջետային և մաքսային խթանները:
10	**Հավասար պայմաններ ներդրողների համար**		• Տնտեսական մրցակցության և սպառողների իրավունքների պաշտպանության մասին օրենք		Վերանայել «Տնտեսական մրցակցության և սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքը՝ ամրապնդելու թափանցիկությունը, ընթացակարգային կանխատեսելիությունը, ներդրողների ուղղորդումը, միջգերատեսչական համակարգումը և ճկունությունը միջոցների կիրառման հարցում: Բացի այդ, թարմացնել դրույթները՝ էլեկտրոնային առևտրին անդրադառնալու,

					համաչափ պատժամիջոցներ ապահովելու և արդարացի կիրարկման պրակտիկան խթանելու համար:
11	**Արտոնություններ ստուգումների կազմակերպման գործընթացում**		Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին օրենք		Վերանայել օրենսդրությունը և Կառավարությանը տալ լիազորություն՝ որոշակի ծավալով ներդրումային ծրագրի շրջանակում կոնկրետ ներդրողի նկատմամբ հայտարարելու որոշակի արտոնություններ ստուգումների իրականացման գործընթացում:

3. Կարգավորման առարկան՝

Օրենքի նախագիծը՝

1. սահմանում է ներդրումների և ներդրողների պաշտպանության երաշխիքները՝ ժամանակակից միջազգայնորեն ընդունված ստանդարտների հաշվառմամբ: Մասնավորապես, նախագիծը սահմանում է.

● խտրականության բացառման երաշխիքը (non-discrimination) իր երկու հայտնի բաղադրիչներով՝ ազգային ռեժիմ (National Treatment/NT) և առավել բարենպաստության ռեժիմ (Most Favoured Nation/MFN).

● էքսպրոպրիացիայից պաշտպանության երաշխիքը, ընդ որում, նախագիծը տալիս է ուղղակի և անուղղակի էքսպրոպրիացիայի հասկացության բնորոշումը:

● իրավական և ֆիզիկական պաշտպանվածության երաշխիքները, ներդրումների իրավական դաշտի թափանցիկությունը և կայունությունը: Այս առումով, օրինակ՝ նախագիծը սահմանում է, որ օրենքով սահմանված երաշխիքներից օգտվող ներդրումները շարունակելու են պաշտպանված մնալ օրենքով սահմանված երաշխիքներով՝ անկախ երաշխիքների ծավալում կատարված փոփոխություններից կամ դրանց վերացումից՝ այդպիսի փոփոխությունից կամ վերացումից հետո՝ հինգ տարվա ընթացքում.

● այնպիսի երաշխիքներ, ինչպիսիք են կապիտալի և գույքի ազատ տեղաշարժն ու փոխարկումը, հողի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքները, աշխատողներ վարձելու երաշխիքները, վեճերի լուծման մեխանիզմները և այլն:

2. Օրենքի նախագիծը սահմանում է ներդրումային խթանների (արտոնությունների) տեսակները, դրանց նպատակը, բնույթը կիրառման իրավական հիմքերն ու մեխանիզմները:

Բացի այդ, առաջարկում ենք ներդնել ներդրումային խթանների տրամադրման ճկուն մեխանիզմ, այն է՝ ներդրումային պայմանագրերի միջոցով խթանների տրամադրումը: Մասնավորապես, առաջարկվում է նախատեսել հնարավորություն ներդրումային խթանները տրամադրել ոչ միայն օրենքների կամ ՀՀ կառավարության որոշումների հիման վրա, այլ նաև՝ ներդրումային պայմանագրերի միջոցով: Նման մոտեցումը կստեղծի առավել ճկուն և հասցեական մեխանիզմ՝ ներդրողներին խթաններ տրամադրելու համար՝ հաշվի առնելով յուրաքանչյուր կոնկրետ ներդրումային նախաձեռնության առանձնահատկությունները: Միաժամանակ, առաջարկվում է սահմանել, որ ներդրումային պայմանագրի հիմնական պայմանները, չափորոշիչները և գերակա ներդրումային ուղղությունները կսահմանվեն ՀՀ կառավարության որոշմամբ:

3. Օրենքի նախագիծը սահմանում է նաև ներդրումների ոլորտում ինստիտուցիոնալ շրջանակը՝ այդ ոլորտում ՀՀ կառավարության իրավասությունները (անհրաժեշտ լիազորող նորմերը), լիազոր մարմնի իրավասությունները:

4. Նախատեսվում է օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանել պաշտոնական հրապարակումից մեկ ամիս հետո:

Միևնույն ժամանակ անցումային դրույթներով նախատեսվում է, որ օրենքը չի տարածվելու դրա ուժի մեջ մտնելու ***<u>օրվանից առաջ</u>*** տեղացի ներդրողների կատարած ներդրումների վրա: Իսկ օրենքի ուժի մեջ մտնելու ***<u>օրվանից հետո</u>*** տեղացի ներդրողների կատարած ներդրումների վրա օրենքը տարածվելու է միայն վերջիններիս պատկանող բաժնեմասնակցության մասով, ***<u>մնացած գույքերի մասով</u>*** տեղացի ներդրողների և նրանց կատարած ներդրումների վրա օրենքը տարածվում է՝

- ✓ ուժի մեջ մտնելու օրվանից, եթե տեղացի ներդրողի կատարած ներդրման ընդհանուր արժեքը գերազանցում է 500. 000. 000 ՀՀ դրամը,
- ✓ 2028 թվականի հունվարի 1-ից, եթե տեղացի ներդրողի կատարած ներդրման ընդհանուր արժեքը գերազանցում է 200. 000. 000 ՀՀ դրամը,
- ✓ 2030 թվականի հունվարի 1-ից բոլոր տեղացի ներդրողների և նրանց կատարած ներդրումների վրա՝ անկախ ներդրման արժեքից:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից: Նախագծի մշակման փուլում հաշվի են առնվել միջազգային ներդրումային համաձայնագրերի դրույթները, ՄԱԿ-ի առևտրի և զարգացման համաժողովի (UNCTAD) ներդրումային օրենսդրության լավագույն պրակտիկաները, ինչպես նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների առաջարկությունները:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ

Նախագծի ընդունումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրից (մասնավորապես՝ «Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում» նպատակից), Հայաստանի վերափոխման ռազմավարությունից (մինչև 2050 թ.), ինչպես նաև մի շարք ոլորտային ռազմավարություններից, այդ թվում՝ արդյունաբերական քաղաքականության և արտահանման խթանման ռազմավարություններից: Օրենքը հանդիսանում է ներդրումային դաշտի համակարգային բարեփոխման մաս: